Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 14.1/[62803]-11

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 15-ԻՆ ԺԱՄԸ 14:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ <<ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Ա. Աշոտյան	ՀՀ կրթության և գիտության նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Ռ. Մարտիրոսյան	ՀՀ ԳԱԱ-ի նախագահ
Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Վ. Սարգսյան	ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ
Ա. Կարապետյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Ռ. Թոփչյան	<<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն
Ռ. Միրզախանյան	Հայաստանի պետական մանավարժական համալսարանի ռեկտորի պաշտոնակատար
Հ. Թոքմաջյան	Հայաստանի պետական ճարտարապետաշինարարական համալսարանի ռեկտոր
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Ա. Ղուկասյան	Հայաստանի բանկերի միության նախագահ
Ժ. Կարաասլանյան	<<Լույս>> մշակութային, գիտական, կրթական հիմնադրամի գործադիր տնօրեն

Բ. Փափազյան — Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի գործադիր տնօրեն

Հ. Գրիգորյան — ասպիրանտ

1. Հիմնադրամի 2011 թվականի բյուջեի քննարկում և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը ներկայացրեց <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի 2011 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվը:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի 2011 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվը՝ հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի դիտողությունները:

2. Նախնական, միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների հավատարմագրման կարգի քննարկում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը նշեց, որ ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից ներկայացված ՀՀ-ում նախնական, միջին և բարձրագույն ուսումնական հաստատությունների կրթության որակի արտաքին գնահատման՝ ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի նախագիծը քննարկել են և կատարել են մի շարք փոփոխություններ, և ըստ այդմ ներկայացրեց հիմնադրամի կողմից մշակված նախագծի վերջ-

նական տարբերակը: Տեղեկացրեց նաև, որ սույն կարգով սահմանվում է ՀՀ-ում նախնա-կան (արհեստագործական), միջին և բարձրագույն մասնագիտական հիմնական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների կրթության որակի արտաքին գնահատման կարգը, և կրթության որակի արտաքին գնահատումն իրականացվում է երկու հաջորդական գործընթացներով՝

1) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննություն, որը պարբերաբար կրկնվող (շրջափուլային) պարտադիր գործընթաց է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բոլոր ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպաիրավական ձևից.

2) մասնագիտության կրթական ծրագրերի պետական հավատարմագրում, որն իրականացվում է կամավորության սկզբունքով՝ միայն ինստիտուցիոնալ փորձաքննության դրական արդյունքի դեպքում:

Տեղեկացրեց նաև, որ ուսումնասիրությունների արդյունքում պարզել են, որ ՀՀ-ում մասնագիտական ուսումնական հաստատությունները պատրաստ չեն կրթության որակի ապահովման միջազգային արդի պահանջներին համապատասխան իրականացվող ինստիտու-ցիոնալ կարողությունների փորձաքննությանը և մասնագիտության կրթական ծրագրի պետական հավատարմագրմանը, այդ իսկ պատճառով նպատակահարմար համարեց կառավարումը համապատասխանեցնել միջազգային արդի չափորոշիչներին, իսկ բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ-ում գոյություն ունեցող ռեսուրսներին:

7. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ կրթության և գիտության նախարար Ա. Աշոտյանին՝ <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանի հետ համատեղ մեկշաբաթյա ժամկետում

լրամշակել նախագիծը և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություն այն ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանի մոտ քննության առնելու նպատակով:

3. Հայաստանի Հանրապետության ուսումնական հաստատությունների ինստիտուցիոնալ փորձաքննության և ծրագրային հավատարմագրման անցումային փուլ 2011-2015թթ.

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը նշեց, որ մասնագիտական ուսումնական հաստատությունների կրթության որակի ապահովման միջազգային (եվրոպական) պահանջների համապատասխան ինստիտուցիոնալ փորձաքննություն և ծրագրային հավատարմագրում անցնելու արդյունավետ ճանապարհ գտնելու նպատակով 2010 թվականին մի շարք հաստատություններում ՈԱԱԿ-ը իրականացրել է ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության և մասնագիտության կրթական ծրագրի պետական հավատարմագրման փորձնական ծրագրեր, և արդյունքում պարզել են, որ ՀՀ մասնագիտական ուսումնական հաստատությունները պատրաստ չեն կրթության որակի ապահովման միջազգային արդի պահանջներին համապատասխան իրականացվող ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությանը և մասնագիտության կրթական ծրագրի պետական հավատարմագրմանը: Նշեց նաև, որ ուսումնական հաստատություններին վերոնշյալ գործընթացներին նախապատրաստելու և իրականացվող բարեփոխումները նվազագույն կորուստներով անցնելու նպատակով այն իրականացնել 2011-2015 թվականներին ընկած ժամանակահատվածում՝ ըստ փուլերի:

2. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանի տեղեկատվությունը:

4. Երկու բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում և Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում փորձնական ինստիտուցիոնալ փորձաքննությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի հավատարմագրման իրականացում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանը նշեց, որ Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում և Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում անցումային ժամանակաշրջանի առաջին փուլը կիրականացվի՝

1) ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննության փորձարկում՝ 2011 թվականի հունվարի 28-ից մինչև սեպտեմբերի 16-ը.

2) մասնագիտության կրթական ծրագրի պետական հավատարմագրման փորձարկում՝ 2011 թվականի փետրվարի 21-ից մինչև դեկտեմբերի 30-ը:

Տեղեկացրեց նաև, որ այս ցանկը կարող ենք համալրել ևս երկու ուսումնական հաստատություններով՝ փորձնական ինստիտուցիոնալ փորձաքննությունների և մասնագիտությունների կրթական ծրագրերի հավատարմագրման պիլոտային ծրագիր իրականացնել նպատակով:

2. Քննարկումներից հետո որոշվեց ընդունել ի գիտություն <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանի տեղեկատվությունը:

5. Հիմնադրամի կանոնադրական նպատակների իրագործման համար անհրաժեշտ է իրականացնել գործունեության տարածքի ընդլայնում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

1. <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանն առաջարկեց հնարավորության սահմաններում լուծել հիմնադրամի կանոնադրական նպատակների իրագործման համար գործունեության տարածքի ընդլայնման հարցը:

2. Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ ԳԱԱ-ի նախագահ Ռ. Մարտիրոսյանին և <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին՝ համաձայն սույն խորհրդի նիստում ձեռք բերված պայմանավորվածության՝ համատեղ քննարկել հիմնադրամի գործունեության տարածքի ընդլայնման հարցը և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել համապատասխան առաջարկություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ